ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

36. Օսմանեանք զՀայկականն մասն երկրի իւրեանց՝ վարեն ըստ տարազու այլոց աշխարհաց, 'ի ձեռն նահանգապետաց և գաւառապետաց, և նահանգք և գաւառք բաժանին 'ի դեհս կամ 'ի վիճակս. որոց պետքն փաշայք են նախապատիւք կամ երկրորդականք և պէկք։ Ըստ այսմ յերիս կամ 'ի չորս նահանգս բաժանի Հայաստան, յԷրզրում, Խարբուրդ, Քիւրտիստան և Հէքքեարի. յորս վերագոյն է պատուով Էրզրումայ նահանգապետն, որ և քան զբազում զայլ նահանգապետս Օսմանեանց, և են ընդ վերատեսչութեամբ և սպարապետութեամբ նորա գաւառք չորք, Էրզրում, Ղարս, Մուշ և Պայազիտ։ Ի Խարբուրդ նահանգի են գաւառք երկու 'ի Մեծ Հայս, Խարբերդ և Մատէն, և այլ գաւառք 'ի Փ. Հայս. այսպէս և 'ի Քիւրտիստան նահանգի՝ համարին և գաւառք ոմանք արտաքոյ Մեծին Հայոց. իսկ 'ի սմա գրին Տիարպէքիր և Վան. և ըստ այլ տեսչութեան՝ Վան ընդ Ճեղիրեի և Մէրանոյ 'ի մի նահանգ գրի Հէքքեարի կոչելով, և Մուշ և Տիարպէքիր 'ի Քիւրտիստան։ Իսկ մեք 'ի տեղագրիս լաւ համարեցաք յուռթ գաւառս կամ 'ի նահանգս ամփոփել զպէսպէս բաժանմունսն, յԷրզրում, Ղարս, Մուշ, Պայազիտ, Խարբուրդ, Տիարպէքիր, Վան և Քիւրտիստան. և սկսանել յարևելից հիւսիսոյ և գառնալ յարևմուտս, և 'ի հարաւ, և գլխաւորել յարևելս հարաւոյ, ուր սահմանակցի ընդ Պարսկահայոց։

Ա. ՂԱՐՍ ԳԱՒԱՌ

37. ՂԱՐՍ գաւառ նահանգին Էրզրումայ՝ 'ի հիւսիսոյ և յարևելից սահմանի Ռուսաց Հայաստանեաք, Սամշխէիւ և Հայկական նահանգաւն, 'ի հարաւոյ՝ Պայազիտաւ, յարևմուտից՝ Արտահանաւ, Բասենով և այլովք վիճակաք Էրզրումայ. ունի և ինքն վիճակս վեց, զՉըլտրը, Չարիշատ կամ Ղարս, Շորեկեղ, Չալտրան, Կաղզուան և Կէչէվան. և է մասն Այրարատ աշխարհի հնոյ, այսինքն գաւառացն Վանանդայ, Շիրակայ, Երասխաձորոյ և Գաբելենից։

Առաջին վիճակ է ՉԸԼՏԸՐ, յոր անուն երբեմն Ճանաչիւր կուսակալութիւնն կամ գաւառն Ախալցխեայ, զորոյ զկէս հատին Ռուսք, և կէս խառնեցաւ 'ի կուսակալութիւնն Էրզրումայ, և մասն մի՝ Ղարսայ, յորոց և 'ի հիւսիսակողմն կայ, սահմանակից բաժնին Ռուսաց. և 'ի սմա է մեծագոյնն ՀՃաց հիւսիսային Հայոց՝ Ճըռոր-Կէօլ որ է Պաղակացիս (18). յորմէ ելանէ գետն համանուն (որ է ըստ նախնեաց՝ Մեծ), և ընթացեալ խառնի 'ի Ջուրն Ղարսայ, և սա յԱրփա-չայ (Ախուրեան)։ Գլխաւոր տեղիք վիճակիս են Ճըռոր աւան և Սուրոնա. առաջինն երբեմն կարի շէն էր և աթոռ կուսակալի, որ ապա փոխեցաւ յԱխալցիխէ, քանզի ոմանակոխ եղեալ 'ի պատերազմաց անչքեցաւ Ճըլտրը, և ոչ յիշատակի արդ ընդ բարգաւաճ շէնս։ — Ի հարաւոյ և յարևելից Ճըլտրայ կայ ՉԱՐԻՇԱՏ վիճակ 'ի հինն Վանանդ, 40 գիւղորայիւք, յորս գլխաւոր է Զարիշատ առ Ճըլտրը գետով, ունի բերդ հին։

38. ՂԱՐՍայ բնիկ վիճակն ձգի 'ի հարաւոյ Զարիշատայ, յարևելից Կողայ և Փէնէքայ (48. 51) և Բասենոյ (52) և յարևմուտից Շորեկեղի. և է ՎԱՆԱՆԴՆ հին և ՎԵՐԻՆՆ ԲԱՍԵՆԱՆ գաւառ Այրարատայ. որոյ գլխաւոր տեղի է հին ՔԱՂԱՔՆ ԿԱՐՈՒՑ կամ ԿԱՐՍ, որ կոչի այժմ ՂԱՐՍ կամ ԳԱՐՍ, և է 'ի հիւսիսակողմն դաշտին Շիրակայ, առ եզերք գետոյն համանուան՝ որ է Մարն մեծ, 'ի 5200՝ բարձու. պայծառացեալ առ պայազատութեամբ Բագրատունի Թագաւորաց Հայոց և Վրաց, յորոց 'ի յեռանոցս Կարսի-փոլսի կոչիւր, այսինքն Դրան քաղաք. արքայանիստ եղև ինքնագլուխ Թագաւորաց Հայոց՝ յամէն 961 ցամն 1064, որք կոչէին Թագաւորք Վանանդայ կամ Կարուց. որոց յետին Գագիկ երկուցեալ յասպատակէ Թուրքաց՝ վաճառեաց Հոռոմոց զքաղաքն և զգաւառ պանդխտել 'ի Փ. Ասիա. իսկ 'ի Յունաց Թափեցին մի ըստ միոջէ Վիրք, Թաթարք, Լէնկթիմուր, Օսմանեանք, Ռուսք, և դարձեալ մնաց 'ի ձեռս Օսմանեանց յետ 1828 ամին. որոց և տեղի է ամրութեան ընդդէմ Ռուսաց, Թէպէտ և տկարացուցին սոքա զբերդն, այլ զարդիս կրկին ամրանայ 'ի գրգռել նորոց պատերազմացն։ Ի հարաւոյ կուսէ քաղաքին յանջատ բլրի ամբառնայ հին բերդն Կարուց՝ կրկին պարսպօք պատեալ, յորս գտանին հայ և վրացի արձանագիրք և քանդակք, և բրգունք կանգնեալք 'ի Թագաւորութեան Վրաց՝ 'ի Հայ բնակչաց քաղաքին, ՈԼԳ (1184) և ՈՁԳ (1234) Թուականաք։ Ունի և միջնաբերդ, և կամուրջս քարաշէնս, յորոց մին զբերդն ընդ քաղաքին կցէ։ Նշանաւոր յամենայն շինուածսն է փոխեալն 'ի մկիթ՝ հոյակապ եկեղեցին շինեալ յԱբասայ արքայէ յամին 942, բոլորշի բազմանկիւն արտաքուստ և խաչաձև 'ի ներքոյ, գեղեցիկ գմբեթաւ՝ որ առանց սեան ամբառնայ. զգեղ դաստակերտին իւրոյ եկեղեցւոյ ցուցեալ Աբասայ առ Բեր արքայ Եգերաց՝ որ յաւակնեալ ընդդէմ Բագրատունւոյն և ձերբակալն եղև, տալա զզկէր 'ի տեսանելեացն։ Բնակիչք Ղարսայ են 2000 տուն, և զօրանիստք պահապանաց. շինագոյն և բազմամարդագոյն ևս էր քաղաքն յառաջ քան զառումն 'ի Ռուսաց։ — Գեօղք իբրև 50 են վիճակին Ղարսայ, այլ ամայացեալք 'ի պատերազմաց, և բազում աւերակք բագրատունական շինուածոց, որպէս 'ի Գիմպէն գեղջ՝ մեծ և